

«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՋ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

“Հաստատում եմ”

ՎՊՄԻ-ի ռեկտոր, բգդ

_____ Խաչատրյան Գ.Կ.

“_16._” _09___ 2010թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՎՊՄԻ-ի ԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ

Քննարկվել և հաստատվել է ՎՊՄԻ-ի

գլխխորհրդի նիստին

Արձանագրություն թիվ 7,

“_16___” _09___ 2010թ.

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետ՝ ՎՊՄԻ) կրթական կենտրոնների (այսուհետ՝ Կրթական կենտրոն) կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանում է ՎՊՄԻ-ի տվյալ ստորաբաժանման կազմակերպչական և մեթոդական հիմքը և նրա հիմնական խնդիրները, գործառույթները, կառուցվածքը, կազմը, աշխատանքի ուղղությունները, ինչպես նաև Ինստիտուտի այլ ստորաբաժանումների և այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերությունները:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն փաստաթուղթը կանոնակարգում է Կրթական կենտրոնի աշխատանքը:

1.2. Կրթական կենտրոնը ՎՊՄԻ-ի կրթական բարեփոխումների և կապերի բաժնի կառուցվածքային ենթաբաժինն է:

1.3. Կրթական կենտրոնը իր գործունեության մեջ առաջնորդվում է ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» օրենքներով, ՀՀ Կրթության և գիտության նախարարության նորմատիվային փաստաթղթերով, ՎՊՄԻ-ի կանոնադրությամբ, ՎՊՄԻ-ի գիտխորհրդի որոշումներով, ռեկտորի հրամաններով և սույն Կանոնակարգով:

1.4. Կրթական կենտրոնի աշխատանքը ղեկավարում է ՎՊՄԻ-ի կրթական բարեփոխումների և կապերի բաժնի վարիչը:

1.5. Կրթական կենտրոնի աշխատանքը համակարգում է կրթական կենտրոնի մեթոդիստը:

2. Կրթական կենտրոնի գործունեության նպատակը

2.1. Կրթական կենտրոնի գործունեությունն ուղղված է մարզի դպրոցների և ՎՊՄԻ-ի միջև կայուն կապերի հաստատմանն ու ապահովմանը:

3. Կրթական կենտրոնի գործունեության խնդիրները և ուղղությունները

3.1. Մարզի դպրոցներում ՎՊՄԻ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների դասախոսությունների, սեմինարների, խորհրդատվությունների կազմակերպում,

3.2. ՎՊՄԻ-ի դասախոսների, աշխատակիցների հանդիպումների կազմակերպում մարզի դպրոցների ուսուցչական կոլեկտիվների, աշակերտության և ծնողների հետ,

3.3. ՎՊՄԻ-ի դասախոսների կողմից on-line դասերի անցկացման ապահովում ,

3.4. Առարկայական օլիմպիադաների առաջին փուլի անցկացում,

3.5. Առարկայական օլիմպիադաների առաջին փուլում հաղթած աշակերտների մասնակցության ապահովում ՎՊՄԻ-ում անցկացվող առարկայական օլիմպիադաներին,

3.6. Մարզի դպրոցներում մշակութային միջոցառումների կազմակերպում՝ ՎՊՄԻ-ի արվեստի բաժնի ուսատղների և դասախոսների, մարզամշակութային կենտրոնի աշխատակիցների մասնակցությամբ,

3.7. Մարզի աշակերտության շրջանում մասնագիտական կողմնորոշմանը նվիրված հարցումների և խորհրդատվությունների անցկացում,

3.8. Աջակցություն մարզի շրջաններում և գյուղերում բնակվող ՎՊՄԻ-ի հեռակա բաժնի ուսանողներին՝ ինստիտուտի հետ ինտերնետային կապի միջոցով անհրաժեշտ ուսումնական նյութեր, ինչպես նաև խորհրդատվություններ ստանալու նպատակով,

3.9. Մարզի դպրոցներում ուսանողների պրակտիկայի անցկացման վերահսկողություն:

3.10. Կրթական բարեփոխումների և կապերի “Բուհ-դպրոց” կապերի աշխատանքային պլանով նախատեսված այլ միջոցառումների անցկացում:

4. Կրթական կենտրոնի փոխհարաբերություններն Ինստիտուտի ստորաբաժանումների և աշխատակիցների հետ

4.1. Կրթական կենտրոնը համագործակցում է Ինստիտուտի կրթական բարեփոխումների և կապերի բաժնի հետ՝ աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների անցկացման նպատակով, ինչպես նաև ՎՊՄԻ-ի որակի կենտրոնի հետ՝ մարզի դպրոցներում պրակտիկայի անցկացման հետ:

5. Կրթական կենտրոնի աշխատակցի (մեթոդիստի) իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը

5.1. Կրթական կենտրոնի աշխատակցի (մեթոդիստի) իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը բխում են սույն կենտրոնի նպատակներից և խնդիրներից և ամրագրվում են պաշտոնի և աշխատանքի նկարագրերով:

5.2. Կրթական կենտրոնի աշխատակիցը (մեթոդիստը) իրավունք ունի

5.2.1. գործել Կրթական կենտրոնի անունից,

5.2.2. ներկայացնել Կրթական կենտրոնի շահերը՝ սույն Կանոնակարգի 3-րդ բաժնում շարադրված հարցերի շրջանակներում,

5.2.3. սեփական նախաձեռնությամբ դիմել իր անմիջական ղեկավարությանը՝ սույն Կանոնակարգի 3-րդ բաժնում շարադրված Կրթական կենտրոնի գործունեության խնդիրները իրագործելու նպատակով,

5.2.4. տալ առաջարկներ՝ Կրթական կենտրոնի աշխատանքը բարելավելու և կատարելագործելու ուղղությամբ: